ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» «----------» 2026թ. N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ-ռոյալներ), ընդհանուր՝ 117284000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
երևան քաղաքի ավագանու
ց· թվականի նոյեմբերի 2026
որոշման N·

| N | Անշարժ գույքի հասցեները | Ընդհանուր մակերեսը, քմ | Ընդհանուր մակերեսի դիմաց վճարվելիք տարեկան գումարը, դրամ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա երաժշտական գործիքները (թվով 30 ռոյալ) Երևանի ենթակայությամբ գործող 25 երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձնելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ: Որոշման ընդունման արդյունքում համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցները կհամալրվեն նոր ռոյալներով, ինչը մեծապես կնպաստի Երևան քաղաքում գեղարվեստական կրթության համակարգի բնականոն գործունեության, մանուկների և պատանիների արտադպրոցական կրթության և գեղագիտական դաստիարակության շարունակական զարգացմանը, երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող կրթական ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև կարևոր դերակատարություն կունենա մշակութային կրթության գրավչության մեծացման, շնորհալի և օժտված երեխաների երաժշտական ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձնվող գույքը ձեռք է բերվել Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեում նախատեսված ծրագրի շրջանակներում, մրցութային կարգով և համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներից ստացված պահանջագրերի հիման վրա: Երևան քաղաքի 2026 թվականի «Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրի իրականացման արդյունքում ձեռք է բերվել 30 ռոյալ, որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 117284000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքը սեփականության իրավունքով հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ